տանով, իր զուլալ սառնորակ աղբիւրներով և այգիներով ներկայացնում է մի հմայիչ գեղարուեստական պատկեր։

Գիւղի հիմք գցողները եկած են Միլակերտից ութը տարի առաջ՝ (1910 թուին) 10 տնով. այդ ութը տարուայ ընթացքում հայի շինարար ձեռքը մեծ դեր է կատարել. մշակել են խաղողի այգիներ, բուսցրել են բազմատեսակ պտղատու ծառեր և զարգացրել են արհեստական մի փոքրիկ ծառաստան, որի հիւսիսային լանջից բղխում է հարուստ և սառնորակ մի աղբիւր, որ հոսելով ծառերի մէջ կազմում է մի փոքրիկ աւազան (գոլ). այդտեղից ջուրը ոլորապտոյտ հոսելով՝ ոռոգում է ամբողջ ծառաստանը և նրա մօտ գտնուող պտղատու պարտէզը։ Այսօր այդ ծառաստանը գնահատւում է 3000 թուումանով։ Գիւղը հարուստ է նաև բերրի հողերով և արօտներով, որի շնորհիւ արտադրում է ընտիր հացահատիկներ, բանջարանոցային բերքեր, ձմերուկ, վարունգ և ծառապտուղներ՝ խնձոր, դեղձ, ծիրան, թութ, ընկոյզ, սալոր և այլն։ Զը նայած դրան, ժողովրդի տնտեսութիւնը այստեղ շատ ընկած է անվերջ հարստահարութիւնների պատճառով և նա լքում է իր հողն ու գաղթում. դրան ապացոյց է այն, որ Արթունաբադն երկու տարի առաջ՝ 1916 թուին ունէր 17 ընտանիք 83 շնչով. այժմ ունի 13 տուն 63 շնչով, որի 36-ը արական է, իսկ 27-ը իգական. մնացեալները սովից և հարստահարութիւններից գաղթել են՝ երկու տունը Ղառզուն, մինը Զիգան, մինն էլ Զարմահալ։

Այստեղի գիւղացիներն աչքի են ընկնում իրենց ընդունակութիւններով. նրանք լաւ հողագործներ են, շնորհալի այգեպաններ, եթէ դրա վրայ աւելացնենք նրանց հայրենասիրութեան, կրօնասիրութեան ոգին՝ նրանց բնոյթագիրը տւած կլինենք։

Գիւղը խանական է. պատկանում է Մամթազի, Մէհդի-Ղուլի, Մամ-Նէսիր, Մահմատ, Ամիր, Ալի-Մարգան, Հէյդար, Ղօլամ-Հուսէյն, Ղօլամ-Ալի, Ալի-Ղուլի և Իբրահիմ խաներին, որոնց մէջ բաժանւած է հողը։ Գիւղացիները